

# ՄԱՅԱԹՆՈՎԱ

## ԾԱՆՈՅՈՒՆ 250-ԱՄՅԱՄԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԲԱՆԱՆՏԵՂԾԸ

Պրոֆ. Գ. Ա. ԱԲՈՎ

Սայաթ-նովան վեհափառ, բազմազան, հյուսիսի նման գյուղացի, Մյուսսեի նման կրթութիւն, մեկն է այն առաջնակարգ բանաստեղծներէն, որոնք իրենց հանճարի շնորհիւ արդեն դադարում են մեկ ժողովրդի սեփականութիւնը լինելուց, բայց դառնում են ամբողջ մարդկության սիրելիները:

Վ. ՅԱ. ԲՐՅՈՒՈՒՆ

Սայաթ-նովայի բանաստեղծական հանճարը իր մեջ ամփոփեց հայ բազմազան անցյալի մշակութիւնը ու բանաստեղծութեան լավագոյն ավանդներն ու վարպետութիւնը, մի նոր աստիճանի բարձրացրեց հայ ժողովրդի բանաստեղծական ստեղծագործութիւնը և նոր ուղիներ բացեց նրա զարգացման համար: Սայաթ-նովայի վարպետութիւնն ու ղեկավարական ավանդները իրենց վառ արտահայտութիւնը գտան հետագա հայ պոեզիայում, սկսած անմահ հաշատուր Արուսեանից մինչև սովետահայ մեծանուն բանաստեղծ Նիկոլ Զարենցը:

Հայ մեծ ստեղծագործողը միաժամանակ Յնդրկովկասի ժողովուրդների եղբայրական կապի, նրանց հոգեկան աշխարհի, հումանիստական գաղափարների անցուղական արտահայտիչը հանդիսացավ: Նա իր ստեղծագործութեան մեջ հանճարեղ վարպետութեամբ արտացոլել է միջնադարյան խավարամտութեան, սխալաստիկայի դեմ տածած հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների ըմբոստ տրամադրութիւնները և մարդկային խոր ապրումները: Կապված լինելով աշխատավորական տարրերի հետ, նա հանդես է եկել որպէս «խալիսի նոքար» և իր նպատակն է համարել ծառայել այդ խալիսին:

Արի համով դուրս առա, խալիսի ետեւ Սայաթ-նովա:

Բարձր է գնահատել Սայաթ-նովան անցյալի մեծ վարպետների արվեստը և իր նախնիների խոսքը ավելի վեր է դասել, քան լալ-ականդները: Այդ հին ավանդների մեջ նա բարձր է համարել բարիք կատարելը և շարիք հրաժարվելը:

Ո՛վ կու հասնէ անցկացած էն մինձ մարկանց,  
Միւր սլապիւրի խուկըն լավ է յսլըն կանց:

Մառի վուրթն իր միշեն կուլի գոյացած,  
Սա՛յաթ-նովա, շար Իան ասող շրլիս դուն:

Չարի տիրապետության աշխարհում բարիքն պաշտպանելու, շարը դատապարտելու սկզբունքն է ազդարարում Սայաթ-նովան, և պահանջում, որ իր հարազատի, իր հավասարի նեղն ընկնելու ժամանակ հեռվից անտարբեր նայող չլինի, այլ դործոն օգնության հասնի, շմոռանա երախտիքը և երախտահատույց լինի: Պոետը չի սիրում «հայվանի պես ուրացող մարդկանց», նա գտնում է, որ «ամեն մարդու հոգում առյուծ կա քնած», ուստի առաջարկում է՝ «աչկըտ փակ վարթ քաղող չըլիս դոմն», «պարզն ու լավը կինքում թաղող չըլիս գունս»:

Մարք կա իսկը հայվանի պես կ'աբաժնե,  
Դալդա տիղն չլ ծախու գոհար ման կաժնե,  
Ամեն մարթու հոգում ասլան քրնած է:

Պարզն ու լավը կինքում քաղող շրլիս դուն:

Ահա թե ինչու բաճաստեղծը իր մի այլ երգում ազդարարում է.

Իդիրն էն է, ում աղ-հացը չի հատնի,  
Ով ծառս կուլի, կապանքներ կու կրտրախի:

Հայ և անդրկովկասյան մյուս ժողովուրդներին կապանքներից ազատելու, նրանց միջև աղուհացը, բարեկամությունը պաշտպանելու գաղափարներով են համակված Սայաթ-նովայի բազմաթիվ ստեղծագործությունները:

\* \* \*

Ավելի քան երկհազարամյա իր պատմական ու հարուստ կուլտուրական զարգացումից հետո հայ ժողովուրդը XVIII դարում գտնվում էր օսմանյան և պարսկական ֆեոդալական բարբարոս բռնակալությունների լծի տակ: Հայաստանը շահերի ու սուլթանների արյունարբու սրով բաժանված էր հայ ժողովրդի դարավոր վամպիրների միջև, որոնք հալածանքների, բռնի հավատափոխության, հայ ժողովրդի բնաջնջման, կոտորածների միջոցով աշխատում էին իսպառ վերացնել նրա գոյությունը, նրա հազարամյա կուլտուրական մեծ ժառանգությունը:

Դաժան նվաճողներն իրենց հեծելազոր ոհմականների սմբակների տակ կոխկըրտում էին հազարամյակ ապրած հայկական գիտության ու արվեստի նվաճումները: Անողորմ սրածության, ավերի ու հրդեհների էին ենթարկվում քաղաքներն ու գյուղերը՝ իրենց հոյակապ ճարտարապետական կոթողներով, հետապնդվում ու ոչնչացվում էին բազում արհեստների հմուտ վարպետները:

Թշնամու հետապնդումից հալածված հայ ժողովրդի առանձին հատվածները ցրվում էին հայրենի երկրից դուրս, փռվում ամբողջ աշխարհով մեկ, բնակություն հաստատում Արևմտյան Եվրոպայում, Արևելքի ամենահեռավոր վայրերում: Եվ այդ օտար երկրներում բնակություն հաստատելով շարունակում էին զարգացնել իրենց բազմադարյան մշակույթը: Հայ կուլտուրայի նոր օջախներ էին ստեղծվում Վենետիկում, Մադրասում, Իսպահանում և այս բոլոր վայրերից կապ էին պահպանում մայր երկրի հետ:

Առանձնապես ուժեղ էր բնիկ երկրի հայերի կապը Նոր Զուղայի հայկական գաղութի հետ, ուր աճել էր հայ խոջանների կապիտալը, որ առևտրական

կապերի մեջ էր մի կողմից Հնդկաստանի ու Արևմտյան Եվրոպայի, մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ։ Անհաշիվ էին դեռ պատանի հասակում իրենց հայրենի օջախից զրկված և աշխարհից աշխարհ թափառող հայ պատանիները։ նրանք երբեմն ձեռք էին բերում մեծ փորձ ու հմտություն, տիրապետում բազում լեզուների, հարստանում կենսական իմաստությամբ, կամ՝ նյութական խոշոր հարստություն կուտակած՝ վերադառնում էին հայրենի երկիրը, աշխատում էին օգտակար լինել նրան, նորից վերականգնել ու վերաշինել այն։ Այսպես, հնդկաստանցի հայ վաճառականի որդի Հովսեփ էմինը փորձում էր Հայաստանը ազատագրել օտարների լծից։ Երկրի անկախության հոգսերով ապրում էին նաև Իսրայել Օրին, Դավիթ Բեկը, ինչպես և օտարության մեջ գտնվող շատ հայեր։ Նույն այդ տրամադրությունն է հնչում ֆրանսիական թագավորին այցելած բաղիշեցի Մահտեսի Շահմուրատի օրագրում, որի մեջ հեղինակը նշում է, թե Վերսալում 1693 թ. ինքը պատահել է սիսիանցի, հայերցի, էրզրումցի, դաշադանցի և այլ վայրերից եկած հայերի, որոնցից մեկը իր թարգմանն էր կյուդովիկոսի պալատում։

Ազատագրության հույսով էր ապրում նաև բուն երկիրը։ XVIII դարի առաջին կեսում Վրաստանն արդեն հեռանկարներ ուներ նորից դառնալու ինքնուրույն պետություն։ Անդրկովկասի հայերը նույնպես ակնկալում էին ազատություն ձեռք բերել ռուսական պետության հովանավորության ներքո։ Հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը և թշնամիների դեմ անցյալում համատեղ մղած պայքարը հիմք ունենալով՝ Վրաստան էին անցնում Պարսկաստանից և Թուրքիայից դժգոհ հայերը։ Մելիքներից շատերն իրենց հպատակների հետ փոխադրվում էին Վրաստան, որպեսզի համեմատաբար ապահով մի անկյուն գտնեն նույն ի վեր այստեղ ապրող և տնտեսական մեծ ուժ ներկայացնող հայերի միջավայրում, մանավանդ՝ Թիֆլիսում։ Իսկ հայ ժողովրդի հիմնական հատվածը՝ իր հայրենի լեռներին ապավինած, շարունակում էր պայքարել օտարերկրյա զավթիչների դեմ հանուն իր ազգային անկախության։

XVIII դարում մեծ թափով ծավալվում են հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապերը։ Բազմաթիվ հայեր գործոն աջակցություն էին ցույց տալիս ոչ միայն Վրաստանի քաղաքական-պետական աշխատանքներին, այլև մասնակցում էին վրաց գիտական ու գրական կյանքին։ XVIII դարի հայ հասարակական մտքի ամենաառաջավոր արտահայտություններից մեկն էր հնդկահայերի մեջ սկսված հանրապետական ու լուսավորական շարժումը, որն ազդարարեց հայ ժողովրդի պետական վերակենդանացման ծրագիրը։ Այդ նույն դարաշրջանում եռանդուն աշխատանք էր տարվում վրաց և հայ միացյալ ռազմական ուժերով Հայաստանը պարսկական ու տաճկական լծից ազատագրելու համար։ Այսպիսով ազգային-ազատագրական նոր պայքարի սկիզբը հանդիսացող մի ժամանակաշրջան էր XVIII դարը հայ ժողովրդի համար, որ համարնում էր ֆեոդալիզմի դեմ պայքարելու առաջադիմական ձգտումների հետ։

Ազգային ինքնագիտակցության այս նոր զարթոնքի շրջանում էր, որ հանդիս եկավ հայ մեծ բանաստեղծ, երգիչ և երաժիշտ Սայաթ-Նովան։ Եվ միայն դամայն հասկանալի է ազգային հպարտության այն խոր զգացումը, որ Սայաթ-Նովան իր երգի մեջ արտահայտում է որոշակիորեն.

Սայաթ-Նովան իմեր հալ է, իմ հավատին վայիմ կանգնած։



Ազատագրության համար պայքարող ժողովրդի հույզերն ու խոհերն է արտահայտել մեծ բանաստեղծը իր ստեղծագործության մեջ՝ ծառանալով ֆեոդալական բռնության, մարդու մաքի աղատությունը ճնշող սխուրաստիկայի դեմ, գովերգել է հումանիզմի, արդարության, մարդկային ողու ազատության իդեալները։ Ահա թե ինչու, աճելով XVIII դարի հայ հասարակական կյանքի միջավայրում, Սայաթ-Նովայի ստեղծագործությունն իր առաջավոր բովանդակությամբ, կատարյալ արվեստով դուրս է գալիս ազգային շրջանակներից ու արձագանքում համամարդկային վեհ ու առաջադեմ գաղափարներին, լայն ընդունելություն է գտնում ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների հոգում։ Նա ըմբոստանում է անարդարության, բռնության ու սոցիալական անհավասարության դեմ։ Մատնալով ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչների դեմ, բանաստեղծը խիզախորեն հայտարարում է․

Ձեռք վի կալ, վաղ մարտիքին չիմ ուզում.  
Լս աշխարհում փարքամուրին չիմ ուզում.  
Վաղ բան ասիլ, յա վաղուրին չիմ ուզում.  
Յիս մաղ մաք իմ՝ նամարդուրին չիմ ուզում...  
Յիս ռամիկ իմ՝ բավադուրին չիմ ուզում։

Ռամիկի մարդկային իրավունքը պաշտպանելը, հասարակական անարդարությունների դեմ ըմբոստանալը հանդիսացավ այն հիմունքը, որով Սայաթ-Նովան իր երգերում հանգում է խոր ընդհանրացումների կյանքի մասին․

Հեքիմ ու դատաստան չը կա, մե դրուստ աղալար չը կա,  
Են մաք չը կեր՝ ազատիլ էր, Սայաթ-Նովեն դարին մընաց։

Բանաստեղծին ճնշում էին այն խոր հակասությունները, որ գոյություն ունեն ֆեոդալական հասարակության մեջ․

Վուրն ախկառ, վուրն օսկով մե գտեգին,  
Վուրն գինի, վուրն աղու մե բանգի.  
Մեկը կոծե սազ, ին մեկն էլ իր շանդին,  
Մեկին դամ ու վայիլ, մեկին՝ ցավ ու սուփ։

Ցավ ու սուգով ապրող ճնշվածներին էր նաև Սայաթ-Նովա հանձարեղ բանաստեղծը, որ բռնության միջավայրում իրեն զգում էր որպես մի օտարական երգիչ, դարձրել ըրրուլ․

Ղաբիբ իմ, աբուն իմ լալի  
Դժվար դարի հանդիպելով.  
Տեր իմ կանչում կսկըծալի,  
Կիեքում չարի հանդիպելով։

Նա խորապես զգում էր չար կյանքում գոյություն ունեցող հասարակական անհավասարությունը։ Ահա թե ինչու բանաստեղծի զգայուն հոգին նրան հասցընում էր աշխարհի անարդարության գիտակցմանը։

\* \* \*

Մանր է եղել Սայաթ-Նովայի վիճակը մանկուց։ Նրա հայրը՝ Մահմեդ Կարապետ Սայադյանը, Կիրիկիայի Աղանա քաղաքից փոխադրվել է Հալեպ, Հալեպից՝ Երուսաղեմ, ապա՝ Կրաստան, հավանորեն թուրքական հալածանքներից փախչելով։ Նա բնակություն է հաստատել Ռիֆլիս քաղաքում, այստեղ

ամուսնացել է նույն քաղաքի Հավլարար թաղամասի բնակչուհի Սառայի հետ։ Այդ մասին է վկայում ինքը բանաստեղծը՝ աղբյուրներին դրած իր մի բանաստեղծության մեջ։

Սայար-նովու վարանիցը հարց կու տան.  
Մեկը կուսե՛ չինդն է, մեկը՝ Համադան...  
Վարանըս Թիֆլիսն է, կոյմը՝ Էրաստան.  
Մերըս Հավլարարցի, հերըս Հալարլու։

Ինչպես վերջերս պարզել է Հայկական ՍՍԽ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մելիքսեթ-Բեկը, Սայաթ-Նովայի Թիֆլիսում ապրող մայրը եղել է սանահնեցի և մեծ բանաստեղծը ծնվել է հայկական մշակույթի հնադույն օջախներից մեկում՝ Սափահին գյուղում։ Սայաթ-Նովայի մի ձեռագիր արտագրության հիշատակարանում նշվում է. «Հայրն իմ Մահտեսի Կարապետն է և մայրն իմ Սառան»։ Մահտեսի Կարապետի կոչումը ցույց է տալիս, որ նա այցելել է Երուսաղեմ։

1712 թ. ծնվում է Մահտեսի Կարապետ Սայադյանի որդի Արուսիկը, որը հետագայում իր համար գուսանական մականուն է ընտրում՝ կոչվելով Սայաթ-Նովա։ Նա իր պատանեկությունը անց է կացրել Թիֆլիսում։ Արևելքի ու արևմուտքի միջև առևտրական ճանապարհների հարուստ քաղաքներից մեկն էր այդ ժամանակվա Թիֆլիսը։ Նրա շուկաներում վրացերեն և հայերեն լեզուների հետ միասին հնչում էին աղբյուրներենը, պարսկերենն ու տաճկերենը, ինչպես նաև Եվրոպայի ու Ասիայի այլ երկրների լեզուները։ Զգալի կշիռ ու դեր ունեին հայ վաճառականներն ու արհեստավորները, որ իրենց բուն երկրից չվելով, հովանավորություն էին դտնում Վրաստանում։ Դեռ փոքր հասակից իր մայրենի լեզվի հետ միասին Սայաթ-Նովան տիրապետեց վրացերենին, աղբյուրեաներենին, պարսկերենին, ինչպես և հին հայերենին՝ գրաբարին, որ նա հավանորեն կարող էր սովորած լինել ուսանելով այն ժամանակվա Անդրկովկասում հայկական մշակույթի ու կրթության համար նշանավոր դպրոց հանդիսացող Սանահնի վանքում։

XVIII դարում շատ հաճախ Վրաստանն ու նրա մայրաքաղաքը ենթարկվում էին տաճկական ու պարսկական արշավանքներին, լեզգիների ավարառու հարձակումներին, որոնք անհամար վիշտ ու զրկանքներ էին բերում բնակչությանը։ Ինչպես ավանդությունն է պատմում, պատանի Արուսիկն Սայադյանը եղել է ջուհակ և ստեղծել է ջուհակության մի նոր տիպի դազգահ, որի վրա մանվածքը փռում էին ոչ թե հորիզոնական, այլ ուղղահայաց և գործվածքը կատարում էին սենյակի մեջ նստած դիրքով։ Դրա հետ միասին, պատանեկան հասակից Արուսիկը հմտանում է գուսանական արվեստին, տիրապետում է սազ, քյամանչա և տամբուր նվագելուն ու երգեր հորինելուն։ Երկար չի տևում նրա խաղաղ աշխատանքը իր ծննդավայրում։ Նրան ևս, ինչպես իր շատ ու շատ հասակակիցների, վիճակվում է թափառել աշխարհ-աշխարհ, լինել բազմաթիվ երկրներում, ճաշակել պանդխտության ծանր ու հայածական կյանքը, ձեռք բերել կենսական մեծ փորձ ու աշխարհի մասին իր հայացքը։ Ինքնակենսագրական իր մի բանաստեղծության մեջ Սայաթ-Նովան ասում է.

Տասն յոթ տարիս լրացավ՝ դեռ չէի ևս դաստան.  
Տասնինը տարիս լրացավ՝ տեսա Հաբաշ ու Հնդստան։



Սայաթնոյ վաղեմութեան մի քանիսը իրանաստեղծի Հնդկաստան դնալը կապում են պարսից Նադիր շահի հնդկական արշավանքի հետ, որ կարող է հավանական լինել: Հայտնի է, որ պարսից Թահմազ շահի կուլի (ստորով) Նադիրը 1726 թ. զինվորական ծառայության մտնելով Թահմազ II շահի բանակը, իր համախոհների հետ միասին XVIII դարի 20-ական թվականներին Թահմազ շահին զահրնկեց անելով իրեն շահ հայտարարեց, Պարսկաստանից դուրս քշեց թուրքական նվաճողներին և 1736 թ. ավերիչ, զավթողական արշավանք սկսեց Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի, Դաղստանի, ապա և Ավղանստանի ու հյուսիս-արևմտյան Հնդկաստանի դեմ:

Արշավելով դեպի Հնդկաստան, Պարսկաստանի թիկունքը արևմուտքից սպահովելու համար Նադիր շահը արտաքուստ իրեն բարյացակամ ու բարեկամ հայտարարեց հայ և վրաց ժողովուրդներին, համակրանք արտահայտելով դեպի քրիստոնյաները և Մուղանի դաշտում իր թագադրման ծեսը կատարեց հայոց կաթողիկոսի մասնակցութեամբ ու օրհնանքով: Ահա թե ինչու այդ ժամանակ հայկական որոշ շրջաններ իրենց համակրանքն արտահայտեցին Նադիր շահի նկատմամբ: Այդ վերաբերմունքը առկա է նաև Սայաթ-Նովայի մի բանաստեղծության մեջ: Այդ ժամանակ Նադիր շահը Հնդկաստան կատարած արշավանքի համար իր զորքի մեջ հավաքագրեց նաև Վրաստանի հայերից ու վրացիներից, և իրեն պատանդ տանում էր իր զորքի հետ վրաց Թեյմուրազ II թագավորի գահաժառանգ Իրակլին և Իրակլի քրոջը: Անհավանական չէ, որ հավաքագրվածների մեջ լինեին նաև երիտասարդ տամբուրաչի (տամբուրա նվագող) Հարությունը՝ այս հավանականութեան հիմքով է, որ տամբուրաչի քուչուկ Արութինի անունով մեզ հասած օրագիրը, ուր նկարագրվում է Նադիր շահի արշավանքը, սայաթնովագետների կողմից վերագրվել է մեր մեծ բանաստեղծին:

Արութին Սայաթ-Նովայի և տամբուրաչի քուչուկ Արութինի հիշատակությունները Նադիր շահի մասին հավանական են դարձնում Սայաթ-Նովայի մասնակցությունը Նադիր-շահի հնդկական արշավանքներին և նրանց պատկերող օրագրի Սայաթ-Նովային պատկանելու ենթադրությունը: Հետաքրքիր է նաև, որ տամբուրաչի քուչուկ Արութինի գրչին է պատկանում արևելյան երաժշտության և տամբուր նվագելու վերաբերյալ տեսական ձեռնարկը, որ պահվում է Մատենադարանում: Որ Սայաթ-Նովան իրոք շրջել է շատ երկրներում, այդ մասին է վկայում նաև նրա բանաստեղծություններում Պարսկաստանի, Թուրքիայի, Ադվանստանի և այլ երկրների կոնկրետ վայրերի ու իր ժամանակակից քաղաքական գործիչների անունների հիշատակումը, ինչպես և նրա վերաբերմունքը դրանց նկատմամբ: Օրինակ, իր ինքնակենսագրական բանաստեղծության մեջ Սայաթ-Նովան նշում է, որ եղել է Թուրքիայի կողմից զավթած Մուշ գավառի Մշո սուրբ Կարապետ հայկական հնազույն վանքում, ուր նշանավոր գուսաններն ըստ հին ավանդի այցելում էին՝ իրենց ստեղծագործական ներշնչումն ստանալու համար:

Քիչ են Սայաթ-Նովայի կյանքին վերաբերող ճշգրիտ տվյալները: Դժվար է հաստատապես պնդել, թե որոնք են եղել Սայաթ-Նովայի բազում թափառումների պատճառները: Հալածանքները, գերեվարությունը, զինվորագրումը թեև այլ հանգամանքներ, դուրս և աշուղի արվեստի հետ կապված շրջադարձայնությունները: Հայտնի է սակայն, որ XVIII դարի կեսերին Սայաթ-Նովան կրկին վե-



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Գործ՝ Հր. Խոսիկյանի



բաղարձել է Վրաստան և եղել պալատական երգիչ վրաց Իրակլե II թագավորի արքունիքում:

Հայտնի է, որ Վրաստանի անկախությանը ձգտող պրոգրեսիվ տենդենցների արտահայտիչ էր Իրակլե II թագավորը. վերջինս և՛ հմուտ զորավար էր, և՛ հեռատես քաղաքագետ, աշխատում էր ամրապնդել վրաց պետությունը և պայքարելով ֆեոդալական կենտրոնախույս ռեակցիոն ուժերի դեմ, ապահովել վրացիների ու հայերի միատեղ պայքարը օտար զավթիչների դեմ, հովանավորում էր արհեստներն ու առևտուրը, օժանդակում Վրաստանի մշակույթի զարգացմանը: Իրակլե թագավորը բարձր էր գնահատում Սայաթ-Նովայի ստեղծագործությունը: Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն ու ադրբեջաներեն երգերը սիրով էին ընկալվում ոչ միայն Թիֆլիսի, այլև ամբողջ Անդրկովկասի բնակչության կողմից: Իրակլե II թագավորի առաջադեմ ձգտումներին, Վրաստանի անկախության, ազատության միտումներին հակառակ՝ դավադիր, կենտրոնախույս ձգտումներ էին ցուցաբերում վրաց իշխանական տների ռեակցիոն ներկայացուցիչները, դիրքորոշում ունենալով դեպի պարսկական ու թուրքական բռնակալությունները և պառակտողական քայլերի էին դիմում Իրակլեի դեմ՝ թուլացնելով վրաց իշխանության միասնությունն ու ուժը: Այս հողի վրա էր, որ պալատում համախմբված ֆեոդալական սյդ ռեակցիոն տարրերը ծավալել էին գաղտնի ու բացարձակ պայքար այն ուժերի դեմ, որոնք կողմնակից էին Իրակլեին:

Իրակլեի կողմնակիցների շարքում էր նաև Սայաթ-Նովա բանաստեղծը. որ նրան գովերգել է իր մի շարք բանաստեղծություններում և պարտության հայտարարել:

Սայաթ-Նովա քաջավորին Շահբազ էրեկլե ին ասում...

Մինչդեռ պալատի ռեակցիոն թավաղների հասցեին նա գրում էր.

Էս վրաց քավաղներու մեջ չիվան կինոս մաշեցի.  
Էս սիվասիրտ յարի ձեռին արուն-արստունք քափեցի.  
Անարկվածի նրան ճակտիս խալխի ճամուս քաշեցի.  
Սայաթ-Նովեն իմ բանաստեղծ՝ օհմի-չանանի սիրու:

Այդ ռեակցիոն թավաղներն էին, որ աշխատում էին գժտություն հրահրել Սայաթ-Նովայի և Իրակլեի միջև:

Պալատական դավերն ու բանաստեղծի վրա: Նա իր երգերում հաճախ դիմակազերծ էր անում, ծաղրում էր ֆեոդալական վերնախավի պարծենկոտ իշխաններին ու նրանց միջավայրը, նրանց ստորությունն ու ողորմելիությունը. առաջ բերելով այդ իշխանների զայրույթն ու վրեժխնդրությունը: Բանաստեղծի համար անտանելի են ֆեոդալական իշխանների ողորմելի էությունը, նրանց դատարկամտությունն ու վախկոտությունը, շարաշահությունը: Նա սուր երգիծանքով ծաղրում է նրանց հետեյալ տողերով.

Էնենց մաբ կա. փրչես տիպում վեր կընգեն՝  
Ղոշաղ մաբբու ուժն ու հալը կու փտեն.  
Ջիրում մե Բոռ. ժանգուտ դանակ չիս գրճի՝  
Խորասանու սուր խանչալը եու փտեն:

Մե ուրիշն էլ ձով կու մտեն ճավի պես.



Գուրտըն ուշկին կերես մի ամղանի պես.  
Մարք էլ կա, վուր շոլում բռչված հավի պես՝  
Իրենց տանը Ռուստամ-Չալին կու փտեն:

Խոզն ի՞նչպես կանա ծառը բարձրանա,  
Լս աշխարհում չար մարք պիտի չմնա.  
Սայաթ-Նովեն յիփուր սիջլիս կու զնա,  
Քեֆ կու սիրել՝ զալմաղալը կու փտեն:

Ռամիկ ժողովրդի միջից դուրս եկած մեծ բանաստեղծը իր ազնվությունը, գիտակցությունը և խոսքի ուժը ավելի բարձր էր դասում ազնվական ոհմակից և խրոխտ կերպով իր հակառակորդներին դիմելով, նրանց ծաղրի էր ենթարկում՝ ասելով.

Գուն չասիս, բե Լս խիղճ սագանդարն ո՛վ ա.  
Խոսկիս տերն իմ, հունարս Լի զրբով ա.  
Արո՛քիեն իմ, ինձ կոսին Սայսթ-Նովա.  
Հենց բան կոսիմ, որ ամբերում ձեն հանի:

Նրա այս ըմբոստ տրամադրությունների մեջ արտահայտվում էր իր ժամանակի քաղաքային աշխատավորների, արհեստավորների, ուսմիկների տրամադրությունն ու ոգին, ուղղված ֆեոդալական տերերի դեմ: Պալատական այդ ճնշիչ միջավայրում Սայաթ-Նովան հատկապես ըմբոստանում էր իր մարդկային զգացումների նկատմամբ երևան եկող դասային, կաստայական մտայնության դեմ: Նրա համար վիրավորական էր թալաղների արհամարհական վերաբերմունքը դեպի ռամիկ բանաստեղծը: Մյուս կողմից նրա մարդկային զգացումները, անխախտ սերը թելադրում էին, որ ոչ մի ուժ, ոչ մի հարստություն, ոչ շահի կարողություն, ոչ մահվան սպառնալիքը չէն կարող բաժանել սիրահարներին:

Թեզուզ քու քաշըն մարբիտ տան բոլի-բոլի,  
Թեզուզ քու քաշըն ալմազ տան բոլի-բոլի.  
Յար, չիմի տա, չիմ հեռացնի քիզ քու յա՛րեմեն, բարեբաբեմեն:  
Չիմ քաշվի եկած մահեմեն,  
Բաղիփի տրված ա՛հեմեն, բոլի-բոլի.  
Թեկուզ բալամ գա Շահեմեն,  
Յար, չիմի տա, չիմ հեռացնի քիզ քու յա՛րեմեն, բարեբաբեմեն:

Սայաթ-Նովայի համար սուլթանն ու խանից էլ բարձր են սերը և սիրո առարկան, հարազատ, մտերիմ ընկերը: Եվ նա աղղարարում է, դիմելով սիրածին.

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր քա՛ն իս ինձ ամա.  
Անմահական ջրով լիֆն օսկե փրեջան իս ինձ ամա,  
Նրստիմ վրես չրվսֆ անիս՝ զարբսր վրան իս ինձ ամա.  
Սուչս իմացի՛, Լենեց սրպանի՝ Սուլթան ու Խան իս ինձ ամա:

Սոցիալական անհավասարության դեմ ուղղված բողոքի շեշտ է հնչում Սայաթ-Նովայի՝ սիրուհուն ուղղված բանաստեղծություններում անգամ, ու դրանով արտահայտվում է նրա ըմբոստությունը շահերի, խաների տիրապետության դեմ, ազատ կերպով զգալու, ազատ կերպով սիրելու ձգտումն արգելելու դեմ:

Անսահման սերը դեպի մարդը, սերը դեպի ընկերն ու մտերիմը, դեպի իր սիրած էակը—այս մոտիվն է, որ հաճախ հանդես է գալիս Սայաթ-Նովայի

բանաստեղծություններում՝ վարմանալի կերպով միշտ էլ կապված ճշմարտության ու արդարության պահանջի հետ:

Բանաստեղծի հումանիստական մեծ աշխարհազգացումն է, որ բխվում է պալատական միջավայրի, ֆեոդալական հետադիմական մտայնության հետ: Դավադրության հետևանքով Սայաթ-Նովան հեռացվում է պալատից, ստիպված է լինում կրոնավոր դառնալ և կտրվել աշխարհիկ միջավայրից:

Այս առիթով է, որ իրեն հովանավորող Իրակլե թագավորին դիմելով՝ Սայաթ-Նովան սեփական անձի արժանապատվության, իր արդարացիության զգացումով ասում է.

Դուն է՛ն զրլխեն իմաստուն իս, խիլդ հիմարին բար մի՛ անի,  
Լրագումրն տեսածի հիդ միգի մե հեսար մի՛ անի,  
Ցիս խոմ էն զրլխեն Լրած իմ, նուրմեկանց ֆարար մի՛ անի,  
Թե վուր դիդիմ բեզարիլ իս, ուրիշին սարար մի՛ անի:

Նա կոչ է անում թագավորին շհավատալ օտարի խոսքին և բարձր է գնահատում իր արվեստն ու իր արժանապատվությունը.

Ամեն մարք չի՛ կանա խըմի՛ իմ ջուրն ուրիշ ջրեն է՛.  
Ամեն մարք չի՛ կանա կարբա՛ իմ դիրն ուրիշ զրեն է՛:  
Թունիարս ավագ չիմանաս՝ ֆարափ է, ֆարուկրեն է՛.  
Սելավի պես, առանց ցամփիլ, դուն շուտով խարար մի՛ անի:

Դրա համար էլ բանաստեղծն իրեն հորդորում է՝ ասելով.

Արի համով դուլուդ արա, խալխի նոֆար Սայաթ-Նովա.  
Ամեն մարք չի՛ կանա հանգի շահով շրֆար, Սայաթ-Նովա,

Ղաստ արա՛ շուշեդ չը կոտրին, չը խիին ֆար, Սայաթ-Նովա:

Բայց անողոր ֆեոդալական միջավայրը կոտրում է նրա «շուշան», քար չխփում նրա ստեղծագործությանը: Դուսանական ասպարեզից հեռացված Սայաթ-Նովային վիճակվում է դառնալ Կախեթի հայկական եկեղեցու քահանա, իսկ կնոջ մահվանից հետո՝ Հաղպատի վանքի վարդապետ:

Հուսահատական են Սայաթ-Նովայի այս շրջանի բանաստեղծությունները. Իրբեմն նրանք խոսում են աշխարհից հրաժարվելու, երգերից հոգնելու մասին:

Աշխարս մե փանջարա է,—բաղերումեն բեզարիլ իմ.  
Մըտիկ տըվողըն կու խուցվի,—դաղերումեն բեզարիլ իմ.  
Էրեզ լավ էր, կանց վուր էսօր,—վաղերումեն բեզարիլ իմ.  
Մարք համաշա մեկ չի՛ ըլի,—խաղերումեն բեզարիլ իմ:

Բեզարել, հոգնել է, քանի որ ճշմարտությունը «ճանապարհ չի դնում» և շրջապատի սուտը շատացել է.

Ղուրքս նեղուր ճամփա չէ դնում՝ շատացիլ է խալխի սուտը...

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդըս կանց մե ճարն շատացիլ է.  
Չունիմ վաղվան ֆազըր փառֆս, հիմի դարն շատացիլ է.  
Բըլբուլի պես էնդուր դու լամ՝ վարքիս խարն շատացիլ է.  
Չի՛ն բոզնում վախտին բացվելու,—ֆաղերումեն բեզարիլ իմ:

Բայց կրոնական միջավայրն ու վանքը չեն մեղցնում հանճարեղ բանաստեղծի մեջ նրա հետաքրքրությունը դեպի կյանքը և կյանքի առեղծվածները, դեպի աշխարհիկ ապրումներն ու իր անցյալի փառքը:



Դեռևս Կախի եկեղեցում նա կրոնական գրքերից ընտրում, իր համար դրա-  
բար լեզվով արտագրում է այնպիսի հատվածներ, որոնք համահնչումն էին իր  
հոգեկան վիճակին։ Աստվածաշնչից նա արտագրում է էկլեզիաստի գրքի ԹՅՆ  
հատվածները, որ խոսում են աշխարհի ունայնության և կյանքում բարիք գոր-  
ծելու մասին։ Նրա գրչի տակ վերակենդանանում են հին հրեական ֆուկլորի  
լավագույն հատվածները՝ Սողոմոնի «Երգ երգոցի» կենդանի նմուշները սիրո  
և աշխարհիկ տրամադրությունների մասին։

Կրոնական կաշկանդիչ սքեմի տակ բանաստեղծը շարունակում է երազել  
իր երգով խալիսին ծառայելու մասին։ Նրան ծանր վիրշտ է պատճառում մենա-  
կությունը, նա կարոտում է հարազատ ընկերին․

Լաց լիմ մենակ օրի համա,  
Ման զամ սիրդաշ յարի համա.  
Լավ ընգիրն ընգիրի համա  
Դարդի դարման—նա ր Լ Լլած։

Սայաթ-Նովան խորհում է այն մասին, որ անցավոր աշխարհում մնալու՞նը  
աշխատանքն է և գալիք սերունդների համար օգտակար ստեղծագործություն  
ու հիշատակ թողնելը․

Սղոմի չն կարմուռ շինող վարպետն՝  
Անց կենող բար կու դեն, կու ճիշե.  
Խալիսի համա կիճճ մաշեցի, բան տվի՝  
Տապալիս բարն Լլ ասպերս կու բաշե։

Իր վանական մոայլ խուցի մենության մեջ հանճարեղ բանաստեղծը շա-  
րունակում է երազել աշխարհիկ կյանքի ու ստեղծագործության մասին։ Այդ  
Լ վկայում Հաղպատի վանքում Իոնե արեղայի հետ ունեցած զրույցը և վան-  
քում գրած նրա բանաստեղծությունը, որ պահպանվել է վրաց արքայազն Հով-  
հանի «Կայմասորա» գրքում։

Հաղպատի վանքի մոտ Իոնե արեղան հանդիպում է մի վարդապետի, որը  
Իոնեին հրավիրում է իր խուցը, հյուրասիրում է ուտելիքներով ու գինով և ինքն  
Լլ ուտում-խմում։ Վարդապետը իջեցնում Լ իր խուցի պատից կախված սալը  
և նվագում։ Երբ Իոնե արեղան վարդապետին հիշեցնում է, որ հոգևոր անձի  
համար անհարմար է նման վարմունքը, վարդապետը կատակով հայտնում է,  
որ վարդապետ ձեռնադրվելիս սալի լարերը եղել են իր ծոցում և իր հետ միա-  
սին այդ լարերն էլ օրհնվել են, հետևապես, նրանք սուրբ են և քանի դեռ գոյու-  
թյուն ունեն, ինքը ճրանցով պետք է նվագի։ Եվ այս առիթով վարդապետը  
հայտնում է Իոնե արեղային, որ ինքը զժրախտ Սայաթ-Նովան է ու երգում է.  
հետևյալ բանաստեղծությունը։

Թափափուրաց կամփով մելլիս կանչվողիս,  
Թավաղներուց միծրվող ու հարգվողիս,  
Կարմիր կապան արբ ու փառփով հաճողիս  
Արեղայի սիվ բուրձր բաժին Լլավ.  
Դե Լլ յիս ո՞ւմ միդ ղրճիմ, ինչի՞ց Լլավ.  
Լս ամենըն հենց իմ Լս խի՛լից Լլավ։

Իրիճն Լի, գարի դառնալն ինչի՞ս Լր,  
Չիս աղավճի, նուր լուր դառնալն ինչի՞ս Լր.  
Ասե՛ք, կրուճավուր դառնալն ինչի՞ս Լր.  
Վայ քե հենց իմ անբախտ օրի՞ցն Լս չլավ.  
Դե Լլ յիս ո՞ւմ միդ ղրճիմ, ինչի՞ց Լլավ.  
Լս ամենըն հենց իմ Լս խի՛լից Լլավ։

Եվ միևնույն ժամանակ բանաստեղծը ցավում է, որ Իոնեն երիտասարդ հասակում կուսակրոնություն է ընդունել: Նշանակո՞ւմ է այս, թե Սայաթ-Նովան մերժել է կրոնն ու կուսակրոնությունը: Ո՛ր, միջնադարյան կրոնական, քրիստոնեական մտայնությունը որոշ չափով ազդել է Սայաթ-Նովայի առանձին բանաստեղծությունների վրա. սակայն նա խորապես երկրեղկված է եղել ու հոգեկան երկվություն է ապրել. այդ երկվությունն արտահայտել է պատկերավոր համեմատությամբ: Մի բանաստեղծության մեջ դիմելով սիրուհուն նա ասում է.

Առանց քիզ ի՞նչ կոնիմ սոյբաթն ու սագրն,  
Չիոնեմես վեր կոծիմ շանգիրն մեմեկ.  
Չունի ուշ ու միտկրս իրար շաղեցիր՝  
Փահմես կու հիոացնիմ հանգիրն մեմեկ:

Այնուհետև հուսահատությամբ հայտարարում է.

Կու հաֆնիմ մաղեղեն, կու հաֆնիմ շալրն,  
Կերթամ ու ման գու քամ վանքիրն մեմեկ:  
Բըլամ մե մարք ռաստ դա, վուր ինձ խրատե  
Դո՛ղալ, քու լիսեմեն սիւտս սոգատե...

Իսկ մյուս կողմից՝ մղկտում է.

Թե վուր հոֆուտ կամեն իս աճում, մարմինտ բեղամաղ է քում:  
Վե՛ր մե դարդին կու դիմանաս դուն ջրատար Սայաթ-Նովա:

Ուստի բանաստեղծը տարակուսվում է աշխարհիկ ու հոգեկան հարցերի միջև և հուսահատորեն հարցնում.

Մե դուդունըն էրկու դադին ի՞նչ անէ.  
Մե նոֆարըն էրկու ադին ի՞նչ անէ,  
Մե բաղմանչին էրկու բադին ի՞նչ անէ.  
Փեյվանդ գուղէ քազա տընգիրն մեմեկ:

Եւ այց ճգնավորական, միջնադարյան սխուլաստիկան մերժելի է հումանիստ բանաստեղծի համար. նրա երգերի տիրապետող մոտիվը աշխարհիկն է, կյանքի ունալ գեղեցկությունը, իր սիրո առարկան: Ահա թե ինչու նա վճռականորեն բացականչում է.

Մեջլիսներու խաղըն դուն իս,  
Վանքերումն տաղըն դուն իս,  
Սայաթ-Նովու բաղըն դուն իս,  
Կարոտ իմ, բա՛ր իմ ասում...

Էրոտիկ կրթով չի գովերգում Սայաթ-Նովան իր սիրած էակին, այլ բացառիկ քնքշությամբ է պատկերում նրա մարդկային բարեմասնությունները, այդ հատկությունները բնորոշելու համար նա հայրենի բնությունից վերցնում է ամենաբաղմաղան, հարուստ համեմատություններ:

Վարդապետական սև սքեմի մեջ կաշկանդված Սայաթ-Նովայի հոգին սերտորեն կապված էր մնում նաև սիրած «խալխի» հոգու և հույզերի հետ: Վանքի պարիսպներից դուրս երգվող նրա երգերը ոգեշնչում էին ոչ միայն հայ, այլև վրացական ու ադրբեջանական մասսաներին:

Սայաթ-Նովան իր երգերով կենդանի մնաց ժողովրդի հոգում: Նրա բանաստեղծություններն ու երգերը բանավոր կերպով ապրեցին ժողովրդի մեջ,



անցան բերնե-բերան, մինչև որ երջանիկ դիպվածով նրա երգերի տետրը հրապարակ եկավ Գեորգ Ախվերդյանի միջոցով, տպագրվեց Մոսկվայում և տնկապուտի ժառանգությունը դարձավ հայ ժողովրդի մշակույթի հարուստ զանաձարանում:

Հայ ժողովուրդը սիրով պահպանեց Սայաթ-Նովայի անդուդական ստեղծագործությունը: Հետագա հայ աշուղներն աշխատեցին պահպանել իրենց մեծ նախորդի ավանդները: Իսկ 1914 թ. Սայաթ-Նովայի մահվան 120-ամյակի առթիվ լոռվա մեր մեծ նահապետի՝ Հովհաննես Թումանյանի և մեծ նկարիչ Բաշինջաղյանի նախաձեռնությամբ հանդիսավոր կերպով արձան դրվեց բանաստեղծի սպանության վայրում: Թումանյանը սքանչելի կերպով բնորոշեց Սայաթ-Նովային.

Խաղով եկավ.  
Ախով գնաց Սայաթ-Նովան.  
Խրդով եկավ.  
Վերով գնաց Սայաթ-Նովան.  
Սիրով եկավ.  
Մեով գնաց Սայաթ-Նովան.  
Սիրով մնաց Սայաթ-Նովան:

«Ոչ,—գրում է Հովհ. Թումանյանը Սայաթ-Նովայի մասին,—նա մի նոր օրինակ, ձև չէ, մոդա չէ, որ ժամանակի բնթացքում ձանձրացնի ու փոխվի. նրան մին լսողը երկրորդ անգամ լսելիս ավելի պիտի սիրի և մին հասկանալուց ու սիրելուց հետո երբևէ չպիտի մոռանա: Եկեցիկ ձեի մեջ մի մշտական ռուր հողի է նա, մի աղնիվ ու լիքը սիրտ, մի հարազատ, հզոր շունչ, որ մեր աշխարհի հարազատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա, և՛ հայի, և՛ վրացու, և՛ թուրքի վրա, որովհետև հավասար ուժով երգել է և՛ հայերեն, և՛ վրացերեն, և՛ թուրքերեն»:

Անցյալի ճնշումից ու բռնություններից ազատագրված սովետական հայ ժողովուրդը 1945 թ. մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշեց Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակը: Այդ օրերին առաջին անգամ Մոսկու Հասարակական միջոցով վերծանվեցին բանաստեղծի մինչև այդ ընթացմանված ու լաքն հուսարակությունը անծանոթ աղբյուրներից երգերը: Հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսան բանաստեղծի հայերեն, վրացերեն և աղբյուրներն երկերի: Իմարյա լիակատար ժողովածուները: Երևանում, հայ, վրաց և աղբյուրներից երգերից լիակատար ժողովածուները միասնաբար նշեցին Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակը:

Սայաթ-Նովայի ստեղծագործություններն ուսումնասիրել են ոչ միայն հայ, այլև վրաց, աղբյուրներից ու այլ աղբյուրներից գրողներ և գրականագետներ: Նրա առաջին երգերը դեռ նախախորհրդային շրջանում թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն և այլ լեզուներով: Այդ թարգմանությունների անթաղամ պատկեր են հանդիսանում ռուս հիանալի բանաստեղծ, հայ ժողովրդի անդամական բարեկամ Վալերի Բրյուսովի թարգմանությունները: Բրյուսովը հիացել է Սայաթ-Նովայի ստեղծագործական մեծ վարպետությամբ, ուսումնասիրել, բնութագրել է Սայաթ-Նովայի արտակարգ բարձր արվեստը և աշխատել է հասցնել այն ռուս ժողովրդին՝ լիակատար հարազատությամբ:

«Ինչքան բազմազան են սիրո երանգները նրա տարրեր բանաստեղծություններում,—ասում է Բրյուսովը—բոլոր այդ անցումները մեզմ բնթություն-

նից դեպի բոցավառ խանդավառությունը, հուսահատությունից դեպի ցնծությունը, իր նկատմամբ տանկացած կասկածից դեպի արվեստագետի հպարտ ինքնագիտակցությունը: Իրավամբ Սայաթ-Նովային կարելի է անվանել երանգների պոետ: XVIII դարում նա ասես թե արդեն իրականացրել էր մեկ դար հետո Վերլենի տված ավանդը. «ոչ թե գույնը, այլ միայն նրբերանգները»: Սայաթ-Նովայի երգի «երանգները» մենք ընկալում ենք որպես ամենապայծառ գույներ, որոնց հետ չեն կարող մոցել վրձնի հարվածները նվազ հաջողակ, նվազ հանճարեղ պոետների, որոնք շատ թանձր ներկեր են գործադրում: Նուրբ և քնքուշ վրձինով է նկարագրել Սայաթ-Նովան և դրանով ավելի շատ է նրա միշտ էլ գերող բանաստեղծությունների հմայքը»:

Խոշորագույն, ինքնատիպ, հանճարեղ ճորարար էր Սայաթ-Նովան ոչ միայն հայ, այլև համաշխարհային քնարերգության լոկալիզատոր: Սայաթ-Նովայի երգերում արտահայտված է մի մեծ մաքառում՝ հանուն մարդկային բռնադատված իրավունքների պաշտպանության, հանուն մարդկային հոգին կաշկանդումներից ազատելուն: Հասարակական այդ մեծ բովանդակությունն է, որ առանձնահատուկ հմայք, խորություն և անմահություն է տալիս նրա նույնիսկ ամենաանձնական, «Ֆեղ» թվացող բանաստեղծություններին: Անձնականը նրանց մեջ անխզելիորեն կապված է «դժվար դարի», «կյանքի շարի», «վաթանի», «բոնությունը դիմադրելու», «արդարությունը հաստատելու» տենչերի հետ: Դրանով հենց Սայաթ-Նովան դառնում է ժողովրդի հոգեկան մեծ ու բարդ աշխարհի, նրա հույզերի ու ձգտումների իսկական արտահայտիչը՝ բանաստեղծական արվեստի անզուգական վարպետը:

Սայաթ-Նովան նայում էր դեպի գալիքը, դեպի իր հարազատները, նա մտահոգված էր, որ նրան չմոռանան: Դուրյանից հարյուր տարի անց նա հուզվում էր իր հիշատակի պահպանությամբ. նա մրմունջով է նշում, որ չկան իրենից բարձր վարպետներ, շատ աշուղներ, «սիրո դոստեր»:

Քա՜նի լիզու լալիից. բարին չը մնաց.  
Քա՜նի աշուղ մեռավ. յարին չը մրնաց.  
Աշխարհը մինձ Իսկանդարին չը մրնաց.  
Հուրեն լիք գար-գարբարձիւ. իլ չըկանէ..

Բանաստեղծը նշում է, որ աշխարհում ամեն ինչ անցողական է, և նրա երգերի հիշատակն է, որ մտահոգում է նրան.

Հին վերբերս ինձ վախտըն ինձ կու մաչին.  
Յիտի դոստերս ինձ մե կուրա՞մ մարք հաշվին.  
Ասկ-բարեկամ մեմեկ ճիռու կու բաշվին.  
Ախսուս, մոր արտունեմ-պասկիւրին. վուր չըկա:

Այս առիթով նա մտածում էր նոր, գալիք ազնիվ ու երիտասարդ հետևորդների մասին և մնաք բարով մաղթում իր ժամանակակիցներին: Սակայն իզուր էին անմահ բանաստեղծի տարակուսանքները. նրա դոստերը նրան կորած չհաշվեցին ու ոչ էլ նրա ազգն ու բարեկամները իրենից հետո թաշվեցին: Դարերն անգամ անկարող եղան խամբեցնելու Սայաթ-Նովայի հիշատակը: «Խալխի նորարի» առաջադեմ և ըմբոստ հույզերը իրենց հանճարեղ, արտահայտիչ վարպետությամբ քանի դնացին, այնքան ավելի հարուստ դարձան «խալխի» համար:

Սայաթ-Նովան երգում էր գալիք «խաս», արդար ու ազնիվ ժամանակների մասին: Ահա թե ինչու դարերի մոռալ խորքից «խաս», ազնիվ աշխարհ



երազող ժողովրդական սեփական երգիչը այսօր ոչ միայն մոռացության չի տրվել «խալիսի» կողմից, այլև դարձել է ազնվի մոտ ու հարազատ, ավելի սիրելի։ Սոցիալական ու ազգային ճնշումից վերջնականապես ազատագրված և նոր մոտեցում կառուցող հայ ժողովուրդն այսօր ոչ անանձին հպարտությամբ է ֆշում, որ երկու և կես դար անաչ հանճարեղ երգիչն ապրել է մարդու ազատագրման տենչերով։ Հումանիստական գաղափարներով, սիրո և բարեկամության մեծ դժագումներով, ժողովուրդների եղբայրության երազանքով։ Նա երգել է երեք ժողովուրդների հույզերից եղնելով, սիրվել և ծառայել է այդ ժողովուրդներին՝ փրանց հարազատ երեք լեզուներով, իսկ այսօր նրա երգերը սեփականություն են դառնում և բարձր գնահատականի արժանանում մերոյժ երկրագնդի ժողովուրդների կողմից։ Ահա թե ինչու հայ ժողովրդի հանճարեղ երգչի ծննդյան 250-ամյակը տոնում է մերոյժ աշխարհի առաջագեմ մարդկությունը։

### ВЕЛИКИЙ ПОЭТ АРМЯНСКОГО НАРОДА

Проф. Г. А. АБОВ

#### (Р е з ю м е)

Поэтический гений Саят-Новы воплотил в себе лучшие традиции и мастерство армянской многовековой культуры и поэзии, поднял на новую ступень поэтическое творчество армянского народа и открыл для этого творчества новые пути развития. Мастерство и демократические традиции Саят-Новы нашли свое яркое отражение в армянской поэзии последующих веков, начиная от бессмертного Хачатура Абовяна до великого армянского советского поэта Егише Чаренца.

Гениальный Саят-Нова одновременно явился ярким выразителем братских связей народов Закавказья, их духовного мира и гуманистических идей. В своем творчестве он с исключительным мастерством отобразил прогрессивные настроения и глубокие человеческие чувства армянского, грузинского и азербайджанского народов, ненависть к средневековому обскурантизму и схоластике. Будучи тесно связанным с трудящимися массами, он выступал как «слуга народа» и своей жизненной целью считал служение народу.

Великий армянский поэт Саят-Нова писал на языках трех братских народов Закавказья, был любим ими и всем своим творчеством служил им. В наши дни его произведения стали высокоценным достоянием многих и многих народов. Вот почему 250-летний юбилей Саят-Новы отмечает прогрессивная общественность всех стран мира.